Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հունիսի 7-ի N 372- Ա որոշման

«ԿՈՂՔ ԿՈՂՔԻ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Աջակցել ՀՀ-ում և ԼՂՀ-ում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքներին, բազմազավակ ընտանիքներին, սիրիահայ ընտանիքներին, հաշմանդամներին, միայնակ ծերերին: Կազմակերպել միջոցառումներ տարբեր տոնական օրերին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ավստրալիայի «Արմինյան Քրիշչըն Միշըն Ինքորփորեյթիդ» մարդասիրական կազմակերպությունը: Հասցե՝ 1593 Chatswood NSW 2057 Australia, գրանցման համար՝ 1600675:
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամ, ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անտառավան 5-րդ թաղամաս, 58/2, ՀՎՀՀ՝ 05543573
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագրի իրականացման վայրը՝ ՀՀ և ԼՂՀ: Ծրագիրն առնչվում է սոցիալական ոլորտին:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն 2019 թվականի մայիսի 10-ից մինչև 2021 թվականի մայիսի 10-ը կազմում է 249,814.55 (երկու հարյուր քառասունինը հազար ութ հարյուր տասնչորս ավստրալիական դոլար հիսունհինգ ցենտ) համարժեք 82,438.801.50 (ութսուներկու միլիոն չորս հարյուր երեսունութ հազար ութ հարյուր մեկ ամբողջ հինգ) դրամ /$1=330AUD, 10.05.2019 թվականի դրությամբ/:
7.	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացողներն են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն դիմած սոցիալապես անապահով ընտանիքները, Երևան քաղաքի (մոտ 150), ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարանի (մոտ 150), Լոռու մարզի (մոտ 50), Տավուշի մարզի (մոտ 740), «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի կողմից հովանավորվող կարիքավոր՝ թվով 63 քաղաքացիները՝ ընտանիքի անդամները ներառյալ (մոտ 250), ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային հիմնադրամը (մոտ 150), «Ցորենի Հատիկ» միջազգային բարեգործական հիմնադրամը (մոտ 100), «Գեղեցիկ» բարեգործական հասարակական կազմակերպությունը (մոտ 100), մեր կողմից կազմակերպվող միջոցառումներին մասնակցող երեխաները և տարեցները (մոտ 440), սիրիահայ ընտանիքները, հաշմանդամները, միայնակ ծերերը, 2019-2021 թթ.-ի ընթացքում «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամին դիմող այլ կազմակերպություններ և սոցիալապես անապահով անձինք:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թվականի հունիսի 10-ից մինչև 2021 թվականի հունիս ամիսը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն դիմած սոցիալապես անապահով ընտանիքներին. 35 արկղ՝ 12,492 ավստրալիական դոլարին համարժեք 4,122.360 դրամ: ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարան. 35 արկղ՝ 12,407 ավստրալիական դոլարին համարժեք 4,094.310 դրամ: ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային հիմնադրամ. 30 արկղ՝ 10,938 ավստրալիական դոլարին համարժեք 3,609.540 դրամ: ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամ. 569 արկղ՝ 204,377.55 ավստրալիական դոլարին համարժեք 67,444.591.50 դրամ: «Ցորենի Հատիկ» միջազգային բարեգործական հիմնադրամը 10 արկղ՝ 800 ավստրալիական դոլարին համարժեք 264.000 դրամ: «Գեղեցիկ» բարեգործական հասարակական կազմակերպությունը 10 արկղ՝ 800 ավստրալիա-կան դոլարին համարժեք 264.000 դրամ: Ուղեբեռի փոխադրման և այլ չկանխատեսված ծախսեր՝ 8000 ավստրալիական դոլարին համարժեք 2,640.000 դրամ: (2019 թվականի ընթացքում մինչև 2021 թվականի մայիս ամիսը): 1. 2019 թվականի նոյեմբեր ամսին՝ «Աշնանային տոն»-նախատեսվում է Տավուշի մարզի, մեկ դպրոցի (մոտ 60) աշակերտների համար (գործված ծածկոց՝ նոր, հագուստ՝ նոր): Դպրոցը կընտրվի Տավուշի մարզի մարզպետարանի հետ համատեղ: 2. 2019 թվականի դեկտեմբեր ամսին՝ «Մանկան երազանք»-նախատեսվում է Տավուշի մարզի մեկ մանկապարտեզի (մոտ 50) երեխաների համար՝ (գործված ծածկոց՝ նոր, փափուկ խաղալիք՝ նոր): Մանկապարտեզը կընտրվի Տավուշի մարզի մարզպետարանի հետ համատեղ: 3. 2020 թվականի հունվար ամսին՝ «Ժպտա՛»-նախատեսվում է Լոռու մարզի մեկ մանկապարտեզի՝ (մոտ 50) երեխաների համար (գործված ծածկոց՝ նոր, փափուկ խաղալիք՝ նոր): Մանկապարտեզը կընտրվի Լոռու մարզի մարզպետարանի հետ համատեղ: 4. 2020 թվականի ապրիլ ամսին՝ • «Սքանչելի լուր»-նախատեսվում է Շիրակի մարզի մանկապարտեզ (մոտ 40) երեխաների համար (գործված ծածկոց՝ նոր, խոհանոցային պարագա՝ ջրի շիշ՝ նոր, պայուսակ՝ կտորե՝ նոր, փափուկ խաղալիք՝ նոր): Մանկապարտեզը կընտրվի Շիրակի մարզի մարզպետարանի հետ համատեղ: • «Հաղթանակ»-նախատեսվում է Շիրակի մարզի մեկ դպրոցի (մոտ 50) երեխաների համար (գործված ծածկոց՝ նոր, հագուստ՝ նոր, պայուսակ՝ կտորե՝ նոր, գրենական պիտույք՝ նոր): Դպրոցը կընտրվի Շիրակի մարզի մարզպետարանի հետ համատեղ:

		5. 2020 թվականի սեպտեմբեր ամսին «Գիտելիք»-նախատեսվում է Շիրակի մարզի մեկ դպրոցի երկու դասարանի (մոտ 70) աշակերտների համար (գործված ծածկոց՝ նոր, պայուսակ՝ դպրոցական՝ նոր, գրենական պիտույք՝ նոր): Դպրոցը կընտրվի Շիրակի մարզի մարզպետարանի հետ համատեղ: 6. 2020 թվականի հոկտեմբեր ամսին՝ «Շնորհակա՛լ եմ»-նախատեսվում է Շիրակի մարզի, մեկ ծերանոցի (մոտ 170) տարեցների համար (գործված ծածկոց՝ նոր, հագուստ՝ նոր): Ծերանոցը կընտրվի Շիրակի մարզի մարզպետարանի հետ համատեղ: 7. «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի կողմից հովանավորվող կարիքավոր՝ թվով 63 քաղաքացիները՝ ընտանիքի անդամները ներառյալ (մոտ 250): 8. 2019-2021 թթ.-ի ընթացքում «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամին դիմող այլ կազմակերպություններ և սոցիալապես անապահով անձինք: Ապրանքները բաշխվելու են «ԱՍՄ» բարեգործական-մարդասիրական հիմնադրամի 2019 թվականին ներկրած ուղեբեռի ապրանքներից:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսված է բարերարի կողմից ուղեբեռի ներմուծում և անհատույց բաշխում՝ 2019 թվականից 2021 թվականը՝ 249,814.55 (երկու հարյուր քառասունինը հազար ութ հարյուր տասնչորս ավստրալիական դոլար հիսունհինգ ցենտ) համարժեք 82,438.801.50 (ութսուներկու միլիոն չորս հարյուր երեսունութ հազար ութ հարյուր մեկ ամբողջ հինգ) դրամ: Ներմուծում՝ **1.** Գործված ծածկոց (նոր)՝ 16,000.00 ավստրալիական դոլարին համարժեք 5,280.000 դրամ, 5292 ֆունտ. **2.** Հագուստ (նոր և օգտ.), անկողնային պարագա (նոր), մանկական հագուստ (նոր), 186,408.50 ավստրալիական դոլարին համարժեք 61,514.805 դրամ, 10,123.93 ֆունտ. **3.** Անկողնային պարագա /Դեկորատիվ ծածկոցներ/ (օգտ.) 1,564.00 ավստրալիական դոլարին համարժեք 516.120 դրամ, 423.28 ֆունտ. **4.** Գործելու թել (նոր)՝ 149.00 ավստրալիական դոլարին համարժեք 49.170 դրամ, 40.68 ֆունտ. **5.** Կոշիկ (նոր), պայուսակ (նոր և օգտ.)՝ 15,936.00 ավստրալիական դոլարին համարժեք 5,258.880 դրամ, 821.52 ֆունտ. **6.** Օդային հոկեյ սեղան (օգտ.)՝ 100.00 ավստրալիական դոլարին համարժեք 33.000 դրամ, 45.64 ֆունտ. **7.** Գույք (նոր և օգտ.)՝ 5,942.00 ավստրալիական դոլարին համարժեք 1,960.860 դրամ, 1988.83 ֆունտ. **8.** Խոհանոցային պարագա (նոր և օգտ.)՝ 2,496.00 ավստրալիական դոլարին համարժեք 823.680 դրամ, 370.26 ֆունտ.

		9. Խաղալիք (նոր), գրենական պիտույք (նոր)՝ 10,319.05 ավստրալիական դոլարին համարժեք 3,405.286.50 դրամ, 855.98 ֆունտ. **10.** Հիգիենայի պարագա (նոր)՝ 550.00 ավստրալիական դոլարին համարժեք 181.500 դրամ, 27.12 ֆունտ. **11.** Բարձրախոս/Ուժեղացուցիչ (օգտ.)՝ 1,700.00 ավստրալիական դոլարին համարժեք 561.000 դրամ, 79.36 ֆունտ. **12.** Բարձրախոսի կանգնակ (օգտ.)՝ 650.00 ավստրալիական դոլարին համարժեք 214.500 դրամ, 35.28 ֆունտ. **13.** Ուղեբեռի փոխադրման և այլ չկանխատեսված ծախսեր՝ 8000 ավստրալիական դոլարին համարժեք 2.640.000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի համար լրացուցիչ կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում հիմնադրամը համագործակցում է՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ՀՀ առողջապահության նախարարության, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզ, Գյումրու համայնքապետարանի, ՀՀ Արմավիրի մարզի, ՀՀ Տավուշի մարզի, ՀՀ Լոռու մարզի, ՀՀ Արագածոտնի մարզի, ՀՀ Վայոց ձորի մարզի, ՀՀ, ք. Երևան, Հայաստանի մանկապատանեկան մշակութային հիմնադրամի հետ, ՀՀ, ք. Երևան, «Ցորենի Հատիկ» միջազգային բարեգործական հիմնադրամի, ՀՀ, ք. Երևան, «Գեղեցիկ» բարեգործական հասարակական կազմակերպության, ՀՀ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման արդյունավետության նկատմամբ վերահսկողություն կիրականացվի Ավստրալիայի «Արմինյան Քրիշչրն Միշըն Ինքորփորեյթիդ» մարդասիրական կազմակերպության կողմից: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ